Հայտարարություն

Դուբայում կայանալիք կեռասի ցուցահանդեսի մասին

2017 թվականի հունիսի 28-ից 30-ը Դուբայ քաղաքում տեղի է ունենալու «DUBAI CHERRY EXPO 2017» միջազգային ցուցահանդեսը:

Նախատեսվում է, որ այս մասնագիտացված միջոցառմանը կմասնակցեն կեռաս արտադրողներ աշխարհի տարբեր երկրներից, որոնք կներկայացնեն իրենց արտադրանքը և՛ թարմ, և՛ վերամշակված վիճակում:

Միջոցառման հիմնական նպատակն է սպառողների լայն շրջանակներին իրազեկել կեռասի բազմաթիվ սորտերի մասին աշխարհի այն բոլոր տարածքներից, որտեղ այն աճում և մշակվում է:

Ցուցահանդեսի մասնակիցների համար սա լավ հնարավորություն է կեռասի տարբեր սորտերի ներկայացման և առաջմղման, ինչպես նաև հետաքրքրված գնորդների հետ պայմանագրերի կնքման համար: Միջոցառման հյուրերի և այցելուների շարքում կլինեն առևտրային կազմակերպությունների, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, քաղաքական գործիչներ, բիզնեսի, շոու-բիզնեսի, ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, ինչպես նաև տեղաբնակներ և զբոսաշրջիկներ ամբողջ աշխարհից: Ակնկալվում է ավելի քան 10 000 այցելուի մասնակցություն:

Ծրագրով նախատեսվում է անցկացնել կեռասի մրցույթ տարբեր անվանակարգերում՝ արտադրողների շրջանում կեռասի լավագույն սորտի ընտրության նպատակով: Ժյուրիի կազմում ընդգրկվելու համար հրավիրված կլինեն փորձագետներ, առևտրային ընկերությունների ներկայացուցիչներ, հայտնի անհատներ քաղաքականության, բիզնեսի, արվեստի ոլորտներից:

Մրցանակային տեղեր զբաղեցնողները կստանան հատուկ մրցանակներ և նվերներ՝ «Աշխարհում կեռասի լավագույն սորտ» անվանակարգում սերտիֆիկատների, դիպլոմների հանձնմամբ: